օծեն։ Գրիգոր արեղայ Համամիտ գտնուեցաւ խորհրդոյն, երեք կաթողիկոսաց հրաւիրանաց խօսքերն անոնց բերնէն գրի առաւ, եւ սուրհանդակ մը զայն Եգեսիա տարաւ։ Սրապիոն յանձն առնելով՝ էջմիածին գնաց նոյն 1603 տարին, եւ Հոգեգալստեան օրը կաթողիկոս ձեռնադրուեցաւ այնտեղ։ Բայց հազիւ երեք ամիս մնաց աթոռը. Մելքիսեդեկի նենգութեամբ՝ պարսից Շահէն խոշտանգուեցաւ, եւ Ջուղայեցի խօճաներ մեծաքանակ տուգանքով հազիւ ազատեցին զանիկայ, որ եւ գնաց Ամիթ հաստատուեցաւ։

Գրիգոր արեղայ երեք կաթողիկոսներու քովէն դարձեալ Սաղմոսաց վանքը գնաց, ուր մնաց մինչեւ քառասնորդաց պահքը, եւ այնուհետեւ մեկնեցաւ գնաց սոյն "յերկրէն Ուրարթանայ, զոր *Սահաթի փոս* կոչեն, եւ այժմ Երեւան ասեն„ (Ցաշեան, անդ։ "Բիւզանդիոն„ 1907, թ. 3424 "Ուահթիփոս„ տպուած է, ինչպէս նաեւ նոյնտեղ տպուած է ՈՂՔ, փոխանակ ՈԾՔ ըլլալու. թէպէտ Մեսրոպ Վ. Նշանեանի սոյն կտորին ընդօրինակութեան մէջ ալ սխալմամբ գրուած է ՈԾԹ (= 1610), որ անպատճառ ՈԾՔ պիտի ըլլայ)։ Գրիգոր արեղայ եկաւ Բաբերդ, Սրապիոն Վ.ի քով, որ Վահանաշէնու վանքին առաջնորդն էր։ Սոյն 1603ին Մայիսի 28 Հոգեգալստեան օրը, Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ, յիշեալ Սրապիոն եպիսկոպոսէն ծայրագոյն վարդապետ օրհնուեցաւ։ Ի Բաբերդ կը բնակէր Ս. Աստուածածնի եկեղեցին, Ս. Հրեշտակապետաց մօտ, ուր Մայիսի